

Ու ինծիդովս անպարագիծ ու կայտառուն  
Քերթողներուն լեցուէր հոգին ամայի:

Անտառներու մենութեան մէջ սխրալի,  
Ամբարձուղէջ ծառերու մորճ թելերուն  
Վըրայ ամող լռութիւնն ես ըլլայի.  
Կամ ըլլայի արահետը ինկագոյն,  
Ծառաստուերի մութ ձորձին մէջ պլլուող.  
Կամ ըլլայի կոհակումոյց ալելուն  
Հարեւանի հեղեղատին լուսաշող,  
Ու քերթողին տաղէս վանկեր ես տայի:

1[1]Երզն ըլլայի թռչուններուն ծնծղաձայն,  
Ու դառնայի 1[1] ուրախութեան ճիչ 1[1] մը լայն,  
Բանաստեղծի հոգիներուն մէջ նըկուն,  
Ուր կը թախծի խոհանքն ամպոտ, անանուն՝  
Ինչպէս որի՝ թառած շիրմի մը գլխուն:

Եւ ըլլայի Լոյս, Ձեւ, Երանգ, Թրթըռում,  
Կեանքի փաղփուն պատմութեանը ծիրանի,  
Կենսաբաղձիկ 1[1] հոգւոյն երազն անպատում.  
Եւ անձրեւէն վերջ անարեւ ու տրտում,  
Հառաչաձայն անձրեւէն վերջ երբեմնի,  
Նըշուլէի ես վայրկեաններ երջանիկ,  
Արեւաշող ժըպիտ, ծափեր ու ինդում  
Բանաստեղծի հոգիներուն մէջ մենիկ:

## 26. ՀՈՎԸ

1[1]Պատուհանըս մատնահարեց ու անցաւ,  
Հովն հերարձակ աշունին.  
Չարաճըճի ինչպէս աղջիկ մը, ինչպէս  
Խաղընկեր մը՝ դըրան ետին մոռցըւած՝  
Պատուհանըս մատնահարեց ու անցաւ,  
Հովն հերարձակ աշունին:

Իր ետեւէն կը վազեմ ես շնչահատ,  
Ու 1[1]շըւարուն ու յոգնած.  
Ինք խոյս կու տայ իմ գրգանքէս, թելերունս